

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ¹⁾

IV.

Մի քանի խօսք կանանց աշխատանքի մասին

Որովհետև ամուսնութեան և կանանց բարոյականութեան համար, ինչպէս վերևում մի քանի տեղում ակնարկեցի, մեծ նշանակութիւն ունի տնտեսական, նիւթական դրութիւնը, այդ պատճառով աւելորդ չեմ համարում մի քանի խօսքով ներկայացնել կանանց աշխատանքը և նրանց ընդհանուր ծանրաբեռնած դրութիւնը։ Անշուշտ՝ ցանկալի կը լինէր, որ արբունքի հասած երկտեւ երիտասարդները ամուսնանալին և իրենց բուն նպատակին ծառայէին։ Կինն իր ֆիզիքական կազմութեամբ անկարող է երկար, դժուար աշխատանք, լարուած դրութիւն տանել։ Իւրաքանչիւր ամիս նրանց պաշտօնը, յղի դրութեան շրջանը, ծնունդ, մանկան խնամատարութիւն և այլն, սրանք կանանց կեանքի մէջ այնպիսի ժամանակամիջոցներ են, որ շատ դժուար է այս դրութեան մէջ ոչ թէ լարուած, ծանր աշխատանք տալ, այլ շատ անգամ թեթեւ, անզգոյշ աշխատանքն անգամ վնասակար կարող է լինել։

Այսպէս է բնութիւնից սահմանուած և մենք պարտաւոր ենք նրան հնազանդելու. եթէ այս չանենք, ամեն դէպքում էլ կը պատժուենք։ Հին և միջին դարերում կանանց դրութիւնը բոլորովին այլ էր. հազիւ էր պատահում որ նրանք ընտանեկան կեանքից դուրս գալին հասարակական ասպարէզ և իրանց աշխատանքով ապրէին։ Այս բանի համար թէև դրական

¹⁾ Տես «Լուսնայ» № 2։

վիճակագրական տեղեկութիւններ չկան, բայց հաւանորէն շատ քչերին չէր յաջողուում ամուսնութեան հովանութակ մտնել: Ներկայումս էլասիական շատ հասարակութիւնների մէջ, նոյն իսկ մեր հայկական գիւղական կեանքում համարեա կանանց դրութիւնը նոյնն է: Եւրոպական և առհասարակ քաղաքակրթութիւնն առաջ գնացած երկրներում, ուր արհեստներն ու մեքենագործութիւնը ծաղկել, դրամագլուխն իր ճիւղները տարածել է աշխատաւոր և բանուոր դասակարգի վրայ ահա այդպիսի տեղերում նոյն ճնշումները կանանցից շատերին ևս անգործ, անտուն և անհաց է թողնում: Նրանց նախկին ընտանեկան աշխատանքները, ձեռագործները, շնորհիւ մեքենաների ընկան. այնպէս որ նրանք իրենց դրութիւնը մի կերպ պահպանելու համար ստիպուած են գործարանների մէջ թափուել: Նրանք օրնիբուն վատաւողջ օգի, դժուար աշխատանքի, չնչին սննդի պատճառով ծիւրում, մաշուում և անընդունակ են դառնում առողջ, թաքմ սերունդ առաջացնելու: Ահա այս նեղսակիր դրութիւնն ստիպեց կանանց հարց լարուցանել:

Այսօր Գերմանիայում միլիոնից աւել կանայք չեն կարող մարդու գնալ, մասամբ տղամարդկանց սակաւութեան պատճառով, և մասամբ էլ, որ նրանք չեն ամուսնանում: Այսպէս են և բոլոր քաղաքակիրթ երկրներում. այս նշանակում է, թէ ներկայումս միլիոնաւոր կանայք մեծանում, պատրաստուում են այն կոչման համար, որի ճանապարհը փակ է նրանց առաջ: Կնոջը խորհուրդ են տալիս ամուսնանալու, նրանց վրայ շատ տեղերում ծաղրում են, որ ընտանեկան կեանքից ոտքերը դուրս են դնում և հասարակական ասպարէզ իջնում: Այսպէս են վարում նոյն իսկ բանիմաց հասարակութեան ծաղիկ երիտասարդութիւնն ու ուսանողութեան մեծագոյն մասը: Չնայելով սրանց, բայց նրանք չեն տալիս նրանց համար ամուսիններ: Նրան խորհուրդ են տալիս մնալ իր նախկին ասպարիզում և դրան հասնելու համար միջոցներ չեն տալիս: Մէթէ ծիծաղելի չէ գործի և խօսքի մէջ եղած այսպիսի հակասութիւնը: Նախկին կինը և մանուկ և

գործում էր, բայց գիտութիւնը հնարեց բազմապիսի գործիքներ, մեքենաներ, շինուեցան գործարաններ, և ներկայ կինը չկարողանալով բացարձակ մըցել, ստիպուած տեղի տուեց և թողեց իրան հաց տուող գործը։ Այսպէս է ամեն մի քաղաքակիրթ երկրում, այսպէս հետզհետէ լինում է նոյնիսկ մեր փոքրիկ կեանքում։ Կար ժամանակ, երբ հայ գիւղացին շատ քիչ շոր էր դրսից առնում, մեծամասնութիւնն իր կնոջ, իր աղջկայ պատրաստութիւնն էր. իսկ այժմ՝ շատ շորեղէն նա դրսից է առնում, այնպէս որ շարունակ փող դուրս տալով և եկամուտի աղբիւրը քչանալով, օրէօր նա զգալի կերպով նիւթապէս ընկնում է։ Նախկին մարդն ինքն էր տանը պատրաստում իւղ, մոմ, կտաւ, չիթ, գարեջուր և այլ բաներ. իսկ ներկայ քաղաքակրթութիւնն իր դիւրին միջոցներով խլեց ընտանիքների, հետևապէս և կնոջ ձեռքից այդ զբաղմունքները։ Ուրեմն ոչ թէ ներկայ կինն է հեռացել իր ասպարիզից, այլ ասպարէզն է նրանից հեռացել։ Շատ անգամ որպէս բողոք դուրս կը լսէք կրթուած մարդու բերանից՝ թէ կանալք դուրս գալով ասպարէզ, իրանց ամենաբարձր բարիքը, ամենազնահատելի արժէքաւոր կանացիութիւնը (weiblichkeit) կը կորցնեն։ Բայց ինչո՞ւ են նրանք զարգացնում, պաշտպանում այդ թանգազին կանացիութիւնը. միթէ նրանով՝ որ ամենանուրբ դէպքերում տղամարդ բժշկի օգնութեանն են դիմում, կամ թէ միթէ նրանով՝ որ հազարներով ստիպւում են ամուսնանալ միայն ապրուստ ունենալու համար։ Ել ձրտեղ մնաց նրանց քնքոյշ զգացմունքները, սիրոյ աղբիւրը։ Ազնիւ աշխատանքի ասպարէզը փակելով նրանց առաջ՝ ստիպւում են դուրս գալ փողոց, մտնել գործարան, վաճառատուն, գինետուն, գարեջրատուն, սրճարան և այլ տեղեր, որոնք ոչ թէ կանացիութիւնը կը կորցնեն, այլ կեանքի անելանելի խորխորատն են առաջնորդում։ Այո՛, աղջիկները գիւտ գտան, ասում է կանանց հարցի պաշտպան մի գերմանուհի, նրանք տեսնելով՝ որ ազնիւ կերպով անկարելի է գոյութիւն պահպանել, շատ լաւ լիշեցին իրանց կանացիութեան մասին, դուրս բերեցին դրան հրապարակ, ծախեցին և

իրանց թանգագին զարդը փող դարձրին: Այսպէս կանանց հարցը, նրանց դրութիւնը երկար ժամանակ հրապարակի հրատապ խնդիրներէց մէկը դարձաւ, և հետեւանքը եղաւ այն՝ որ կանայք աշխատանքի ազատութիւն ստացան: Միայն զժբախտաբար պէտք է նկատել, որ այդ ազատութիւնը շատ սահմանափակ, միակողմանի, մկանունքային և ֆիզիքական էր. մի բան՝ որ նրա կոչման, կազմութեան, և պահանջի հակառակ է: Եթէ մենք եւրոպական պետութիւնները, ինչպէս՝ Ռտալիա, Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Անգլիա, Շվեյց Նորվեգիա, Դանիա և այլն, ի նկատի ունենանք և նրանց վիճակագրական տեղեկութիւններն առաջ բերենք, այն ժամանակ ակաները կը տեսնենք՝ որ բոլոր կանանց 20—40% իրանց սեփական աշխատանքով են կերակրուում, այսինքն՝ նրանք պարապում են առւտրով, կրպակների, տների, բեստօրանների, սրճարանների, գինետների ծառայութեամբ, լուացարարութեամբ, գործարաններում աշխատելով և դաշտային մշակութեամբ, մինչև անգամ մի քանի տեղերում տաժանակիր, ծանր աշխատութեամբ և այլն:

Թէ այս բաներին նրանք որքան զոհ են տալիս, և ինչ թշուառ դրութիւն է նրանց ներկայանում, այդ նոյն վիճակագրութիւնը մեզ ցոյց է տալիս: Հէնց օրինակ վեր առնենք հայելու գործարանները. այստեղ սնդիկի ազդեցութիւնը կանանց խիստ վնասակար և մահաբեր է. իսկ ցինկի գործարաններում 100 յղի կանանցից 58-ը վիժում են. բացի դրանից ծնուած տղաների 75,5% մեռած են լինում, իսկ կենդանի մնացած 21,5% ից հազիւ 13-ը մինչև երկու տարեկան հասակն ապրում են: Այսպէս էլ հայելու գործարաններում 15% մանուկներ են զոհ գնում, ապակի լղկելու գործարաններում 56%, արճիճէ թերթեր պատրաստելու տեղերում 40%: Յղի կանանց և նրանց ապագայ սերնդի համար աւելի շատ վնասակար են արհեստական ծաղիկ շինելու, գունաւոր թղթեր պատրաստելու և զանազան քիմիական միջոցներով պարապող գործարանները. սրանց կարգին են պատկանում լուցկու, գուտապերչից զանազան իրեր, մետաքսեայ հիւսուածքներ

պատրաստող գործարանները և այլն: Մի խօսքով համարեա ոչ մի բան չկայ՝ ուր կինն իր ոյժը փորձած չլինի. այսպիսի դէպքերում նա ոչ թէ միայն ֆիզիքականով է տուժում, այլ բարոյականով, և իր կոշմանն անպատուաբեր արկածների ենթարկւում: Հենց այդ պատճառով շատ բոլորքներից ու պահանջներից լեւոր հագել հագ գործարաններում կանանց և մարդկանց իրար հետ աշխատելը մի քանի տեղերում վերացրին: այս ամենի հետ ինչ վարձատրութիւն է ստանում կինը, միթէ այլ մարդուն հաւասար—բնաւոյ, եթէ դարձեալ դիմենք վիճակագրութեան, կտեսնենք, որ ամեն տեղ, ամեն գործի մէջ, կինը միշտ պակաս է ստանում. տւելի պարզ լինելու համար բերենք մի քանի օրինակներ: Գերմանիայում Բադէնի մեծ դքսութեան մէջ սովորական աշխատաւորն ամառն ստանում է օրական 1 մարկ 95 ֆ., իսկ ձմեռը 1 մարկ, 43 ֆ. կին աշխատաւորն ամառն ստանում է 1 մ. 25 ֆ. իսկ ձմեռը՝ 75 ֆ.: Պրանկֆուրտի նահանգում տղամարդիկ ստանում են 2 մ. 50 ֆ.-ից մինչև 3 մ. 50 ֆ. իսկ կանայք 1—2 մ.: Խաղալիքներ պատրաստելու տեղերում մարդիկ ստանում են 3 մարկ, իսկ կանայք 1 մ. 50 ֆ.: Դանիայում մարդիկ միջին թուով օրավարձ են ստանում 5,38 կրօն, գիւղերում 4,16 կրօն, իսկ կանայք քաղաքներում 2,58 կրօն, գիւղերում 1,82 կրօն:

Բոհեմիայում թելեր մանելու գործարաններում մարդիկ շաբաթական վարձ են ստանում 3,4—10 գուլդէն. կանայք 2,10—4,80 գուլդէն. շաբաթի գործարաններում մարդիկ շաբաթական ստանում են 2,40—9 գուլդէն, կանայք 1,80—3,50 գուլդէն, և այլն:

Թէ ինչո՞ւ կանայք նոյնչափ աշխատանքով քիչ վարձատրութիւն են ստանում, այդ առթիւ ֆրանսիացի քաղաքատնտես Լըրուարօյ բաւականին խելացի կերպով նկատում է, թէ բացի այն, որ կանայք ֆիզիքական ոյժով օժտուած չեն, այլ և ներկայ հասարակութիւնը նրանց մտաւոր կերպով բարձրանալու և կռուելու զէնքեր չի տալիս. բացի դրանից, գործունէութեան ամեն ասպարէզ նրանց առաջ բաց չէ, մնում է որոշ ասպարէզներ, իսկ այստեղերի համար էլ նրանց թիւը շատ

լինելով՝ տեղ չի լինում: Կան տեղեր էլ, որտեղ գիտութիւն, տեղեկութիւններ և պատրաստութիւն են պէտք, և որովհետեւ կանայք այդ չունեն, դրա համար նրանք կամայ ակամայ ստորին պաշտօններով և քիչ վարձատրութեամբ պէտք է բաւականանան:

Միևնոյն ժամանակ՝ ուր ֆիզիքական ոյժ է պէտք, այնտեղ բնականաբար նրանք չեն կարող տղամարդկանց հետ մրցել. ուրեմն մնում է որ այստեղ էլ նրանք պակաս ստանան:

Կանայք ոչ մի մասնագիտական դպրոց չունենալով, չեն էլ կարող այդպիսի պատրաստութիւն ունենալ և դրա համապատասխան էլ նշանաւոր գործեր ձեռք բերել, ուրեմն նրանց մնում է ստորին պաշտօններ՝ քիչ վարձատրութեամբ: Միւս կողմից Լըրուա բօլն ապացուցանում է՝ որ կանայք էլ այդպիսի գնով համաձայն են աշխատել: Նրա կարծիքով տղամարդ աշխատաւորը չի կարող քչով բաւականանալ՝ ինչպէս կինը. նա շատ ծախսի կարիք ունի, ընտանիքի տէր է, նա կը բողոքէ, կը դիմէ մի ուրիշ տեղ աւելի յաջող գործ գտնելու և վերջապէս հակառակ դէպքում նա կը գաղթէ: Սրա հակառակ՝ կինն անկարող է տղամարդու նման ընդհանուր բողոք ներկայացնել, գործադուլ անել, դրամատիրոջ հետ մրցել, տար աշխարհ դիմել և վերջապէս գործարան մտնող աշխատող կանայք մեծ մասամբ նրանք են լինում, որոնք կամ անյաջող ամուսնութիւնից են փախել, կամ թէ չէ յաջողուել ամուսնանալ և կամ թէ ընտանիքների այն մեծացած աղջիկներն են, որոնք ոչ թէ ընտանիք չունին կառավարելու, այլ թերեւս մասամբ էլ տանից բաժին են ստանում, այնպէս որ նրանք պակասը լրացնելու համար են աշխատում. կան էլ՝ որ իրանց չոր գլուխը պահելու համար են աշխատում որ քաղցից չմեռնեն և քիչ օրավարձով բաւականանում են:

V

Կանանց շարժման մասին.

Այս ամենից պարզ է, որ կանանց նեղ դրութիւնը, ԼՈՒՄԵՏ

ուշ թէ շուտ կրթուած, խոհուն և զգալուն դասի ու-
շագրութիւնը պիտի գրաւէր: Այս հարցին աւելի մեծ
զարկ տուին նոյն իսկ իրանց սեռին պաշտպան լառա-
ջադէմ կանայք. նրանք գործի պարագլուխ հանդիսա-
նալով՝ ընկերութիւններ կազմեցին, միջոցներ որոնեցին
մամուլի, գրականութեան միջոցով այդ հարցն այս կամ
այն կերպ առաջ տարան. այնպէս որ կարճ ժամանա-
կում ոչ թէ միայն լեզեօններով հետևող կանայք գը-
տան, այլ և լիշեալ խնդրի ճշմարտութիւն զգացող
մարդկանց մեծ բազմութիւն: Այսպէս, շնորհիւ սրանց՝
կանանց հարցը ոչ միայն լայտնի կերպով հրապարակ
եկաւ, այլ օրէ օր առաջ գնալով՝ օրուայ այրող ա-
ռաջնակարգ հարցերից մէկն եղաւ «էմանսիպացիա» ա-
նունով: Այս հարցը բացի մամուլից, ընկերութիւննե-
րից և մասնաւոր անհատներից, պարլամենտներում
խորհրդածութեան նիւթ եղաւ, և հերթական աղմկա-
լի հարցերի շարքումն անցաւ: Պետութիւնները ևս ա-
ռանձնապէս ուշք են դարձնում և միջոցներ են որոնում
յաջող լուծումն տալու: Կանանց դատը պաշտպանող-
ներն երկու մեծ բանակների բաժանուեցան. առաջինը
պահանջում էր կանանց մտաւոր, ֆիզիքական և գա-
ղափարական կերպով զարգացնել, բարձրացնել այդ ըն-
կած: Դրութիւնից և հասցնել ինքնուրոյն գործունէու-
թեան, այսինքն նրանց իրաւունքներն ընդարձակել,
հասարակական գործերին մասնակցել, ձայն ունենալ
ևայլն: Այս բանակը կանանց ազատութիւն ասելով՝ ահա
այս էր հասկանում: Բ. ը մարդասիրական պահանջների
վրայ հիմնուած, ցանկանում էր նրանց դրութիւնը
նիւթական, տնտեսական և հասարակական տեսակէտով
բարձրացնել, այլ խօսքով՝ աշխատող կանանց գործնա-
կան կերպով օգնել: Այս համառօտ տեսութիւնից յետոյ
լաւ կը լինի դիմենք եւրոպական պետութիւններին, և
մի քանի խօսքով տեղեկանանք՝ թէ կանանց հարցն
ինչպէս սկսուեց և ինչ դրութեան մէջ է ներկայումս:

Կանանց շարժումը Փրանսիայում

Կանանց շարժումը Փրանսիայում եղաւ անցեալ

դարի սկզբներում և այդ օրուանից մասնաւոր շրջաններում, զանազան հրատարակութիւններում և մամուլի մէջ արծարծուելով՝ առաջ էր գնում: Փրանսիական լեզափոխութիւնից առաջ ժողովրդի ընկած դրութիւնը, դժգոհութիւնն ու կատարեալ ատելութիւնը դէպի տիրապետող թագաւորական տունը, ազնուական և հոգեւորական դասակարգերն այնչափ խիստ էր, որ ամեն մի շնչին բան հեշտութեամբ յուզւում և աղմուկ էր առաջ բերում: Նոյն իսկ կանանց կրթական դրութիւնն այնպէս խիստ և միակողմանի էր, որ ներկայումս հագիւ կարելի է երեւկայել: Կանանց դպրոցները վանքերումն էր, կրօնականների հսկողութեան ներքոյ: Այստեղ սովորեցնում էին միայն քրիստոնէական վարդապետութիւն, մի քիչ կարդալ, գրել, մի փոքր էլ թուաբանութիւն: Իսկ մնացած ժամանակը գործ էին դնում զուտ կրօնական պարտականութիւններ կատարելով: աղօթելով, զանազան փորձութիւնների, ծովի, պասի ենթարկուելով: Մինչև անգամ ճաշի ժամանակ նրանք հանգիստ սրտով չէին վարող մնալ, պարտաւոր էին կատարեալ լուութիւն պահել և իրենց ընկերակիցներից մէկի կարգացած այս կամ այն սրբի պատմութիւնը լսել: Մի հակասութիւն՝ որ ներկայումս թէ մանկավարժութիւնը և թէ առողջապահութիւնը մերժելով մերժում է: Իւրաքանչիւր օր միշտ եկեղեցի գնալը պարտադիր էր. և պատարագից յետոյ անմիջապէս սկսւում էր աստուածաշարական կարգերի մասին դատել, մտածել, ապա սկսում էր խրատներ, բարոյական չորուցամաք քարոզներ առանց կենդանի օրինակի, առանց զգացմունքի, այլ ամեն ինչ ձեւական, ամեն ինչ չափած, ձեւած սահմանով: Նոքա մինչև անգամ իրաւունք չունէին բարձր խօսել և միասին հաւաքուել խաղալ: Մի խօսքով աւելի շուտ նրանք պատրաստւում էին վանական, միայնակեաց, քան թէ բուն գործնական կեանքի համար: Աւելորդ է այս բանի մասին երկար ու բարակ կանգ առնել, քանի որ ով եզուիտական դպրոցների կարգերի հետ ծանօթ է, նա շատ լաւ կը հասկանայ այստեղի օրիորդաց վարժարանների մասին: Այս պատճառով 1787 թ. Փօլէ, ս. Ժիւստ,

և ապա երկու տարի յետոյ, այսինքն 1789 ին կանայք նոյն իսկ ֆրանսիական թագաւորին բողոքագիր ներկայացրին, որտեղ իրանց թշուառ և անտանելի դրութիւնն էին նկարագրում: Նրանք խնդրում էին արտօնութիւններ շնորհել և իրենց իրաւունքները բարեփոխել: Յեղափոխութիւնից յետոյ կանանց կրթութեան գործի մէջ առաջնակարգ պատիւներից մէկը պատկանում է տիկին Կամպանին: Սա իր հետեւողներով մեծ զարկ տուեց կրթութեանը յեղափոխութեան ժամանակ փակուած դպրոցները բանալ տուեց. բացուեցան և ուրիշ դպրոցներ, որոնք միջնակարգ դպրոցներ էին համարւում: 1800 թուականից, մանաւանդ 30-ական թուականներից սկսած, կանանց դատը շատ նշանաւոր մարդիկ պաշտպանեցին, ինչպէս՝ Ժիւլ Ժանէ, Շատոբրիան, Լաբուլէ և այլն: 50-ական թուականներին նոյն հարցն աւելի առաջ գնալով, նշանաւոր քաղաքագէտներ անգամ մասնակցեցին. ինչպէս՝ Ժիւլ Սիմօն, Պօլիա-Լէրուա Բօլէ, Միշլէ և այլն: Կանայք ևս այս գործերում նշանաւոր դեր խաղացին, ինչպէս՝ Թ. Ժալիս, օր. Սափան, Թ. Բարա, և այլն, այնպէս որ, 1845-ին Սէնի դէպարտամենտում հաշւում էին 253 գիշերօթիկ կանանց վարժարաններ, 1846-ին 266 և 20 վանքեր: Աշխարհական դպրոցներում սովորում էին 13,484 աշակերտուհի, իսկ հոգեւորական դպրոցներում 1,600: Չնայելով մի քանի անգամ դպրոցների ուղղութիւնը որոշ չափով զարկ տուեց, մանաւանդ Նապօլէօն I-ի ժամանակ, բայց և այնպէս ընդհանուր ուղղութիւնն աւելի կրօնական էր և մեծ դեր էին խաղում հոգեւորականները. այս բանը տեւեց մինչև 1867 թիւը. ահա այս ժամանակ Ժիւլ Սիմօնն օրէնսդրական ժողովում պահանջեց պետութեան միջնորդութիւնը: Նոյն միջոցներում էր որ Վ. Դիւրլիի նախարարութեան օրով սահմանուեց համալսարանական կուրսեր:

1878 թուին առաջին անգամ Պարիզում կազմուեցան կանանց ընդհանուր, միջազգային կօնգրէս: Այստեղ մասնակցում էին Ֆրանսիացիք, Շվեյցարացիք, Իտալացիք, Հոլանդացիք, Ռուսաստանցիք, Ամերիկացիք և այլն: Կօնգրէսին մասնակցում էին նոյնպէս բազմա-

Թիւ սենատորներ, հրապարակախօսներ, պատգամախօսներ և շատ նշանաւոր գրողներ: Այս ամենն ապացոյց է, թէ այդ խնդիրը որչափ հասունացած էր և թէ ինչպիսի համակրութեամբ էին վերաբերուում դէպի այդ շարժումները: Կօնգրէսի պարապման առարկաները բաժանուած էին 5 մասի. պատմական, մանկավարժական, տնտեսական, բարոյական և օրէնսդրական: Այն ամենի մասին եղած վճիռները յետոյ առանձին գրքերով դուրս եկան, որոնք բաւականին հետաքրքիր տեղեկութիւններ են պարունակում:

Հէնց այդ միևնոյն ժամանակներում տիկին Մարի-Դերմի և Գրիստ Տրօտի քարոզութեամբ և աշխատութեամբ կազմուեցան կանանց ընկերութիւն, որի նպատակն էր կանանց դրութիւնը բարւոքել: 1862 թուին Լէօն Րիշէի ձեռքով կազմուեց մի այլ ընկերութիւն. սրա նպատակն էր ֆրանսիական կանանց իրաւաբանական դրութեան բարւոքումն:

Ի նկատի ունենալով ֆրանսիական ազգի ընդհանուր բնաւորութիւնը և տեմպերամենտը, պէտք է ասել՝ որ կանանց ազատութեան հարցն այս երկրում աւելի պլատօնական բնաւորութիւն ունէր, քան գործնական, այլ խօսքերով՝ ֆրանսիական կանայք իրենց ազատութեանը հակուած էին աւելի խօսքերով, քան թէ լուրջ հիմնական աշխատանքով և յարատե ինքնագիտակցութեամբ: Ֆրանսիական կանանց առաջ շատ հեշտութեամբ և առանց երկար ու բարակ չարչարանքի համալսարանի դռները բացուեցան, բայց դժբաղդաբար լուսոյ տաճարի դռները կարծես ֆրանսուհու համար չէր, այլ ուրիշների, որովհետեւ իրանց շատ քչերն էին այստեղ յաճախում և օգտուում: Օրինակ՝ 1866—82 թ. ընդամենը 109 կանայք են համալսարանից իրաւունք ստացել և դրանցից 98-ը միայն Պարիզիցն էին: 1886 թուին 4,000 բժիշկ ուսանողներից ընդամենը 103 կանայք կային, իսկ սրանցից էլ միայն 8-ը ֆրանսուհի էր: 1889—90 թ. Պարիզում 152 ուսանողուհիներ կային, իսկ բժշկական մասում 123. սրանցից 24-ը ֆրանսուհի էին: Չնայելով այս ամենին, այնուամենայնիւ ֆրանսիական կանանց տաղանդը բեղմնաւորուեց և

հրապարակ դուրս եկաւ, այնպէս որ՝ այսօր մի շարք կանալք կարելի է լիշե՛լ՝ որպէս գրող, գեղարուեստագէտ, երաժիշտ, նկարիչ, քանդակագործ և այլն:

Կանանց շարժումն Անգլիայում:

Պատմութեան հետ փոքր ի շատէ ծանօթ անձնաւորութիւնը պարզ կը տեսնի՝ որ Անգլիայում համարեա պատմական բոլոր խոշոր եղելութիւնները հետզհետէ աւանց մեծագոյ աղմուկների և լեղափոխութիւնների, դրական կերպով քաղաքակրթական ճանապարհով քալլ առ քալլ անզգալի կերպով առաջ է գնացել: Այնպէս էլ եղաւ կանանց ազատութեան հարցի վերաբերւամբ: Դեռ անցեալ դարի վերջերին, այսինքն 1792 թ. այդ հարցն արծարծուելով՝ տարածուեց և մեծ զարկ ստացաւ 1850-ական թուականներից, մանաւանդ երբ գործի գլուխ կանգնեց հռչակաւոր Զ. Ս. Միլը, այնպէս որ կարճ միջոցից լեռոյ սրա շնորհիւ կազմուեցաւ կանանց մի նոր ընկերութիւն, որի նպատակն էր՝ կանայք ևս երկրի կառավարութեան գործում ընտրողական ձայն ունենան: Այս ընկերութիւնն իր գործն այնպէս կանոնաւոր տարաւ, որ կարճ միջոցում զանազան քաղաքներում նոյն տեսակ 40 ընկերութիւններ կազմուեց: Երբ այս ընկերութիւնների համակրողների թիւն աւելացաւ, այնուհետեւ այդ հարցը պարլամենտում, հասարակական ժողովարաններում և այլ այդպիսի բազմամարդ տեղերում կանանց խնդրի մասին էր քարոզւում, ոչ մի առիթ ոչ մի յարմար դէպք ձեռքից բաց չէին թողնում, այլ ամեն ժամանակ այդ խնդիրները ժողովրդի մէջ վառ էին պահում և կուսակիցների թիւը շատացնում: Հետեւանք եղաւ երկրի զանազան կողմերում միտինգներ կազմել, իսկ մամուլը լուրջ կերպով ամենին հետեւելով տեղ էր տալիս ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրութիւնների:

Այնուհետեւ առաջ եկան շատ նշանաւոր Անգլիական ոյժեր. սրանք ևս հետաքրքրուեցին կանանց հար-

ցով և իւրաքանչիւրը հարցն այս կամ այն կողմից շօշափում էր:

Այս նախապատրաստութիւնից յետոյ, կանանց աշխատութեամբ նոյն հարցն արծարծուեց և պարլամենտում: Կանանց ցանկութիւնն էր, որ իրենց հարցը պարլամենտի հերթական խնդիրներից մէկը լինի, և իսկապէս՝ այդ հարցը համակրողները պարլամենտում ևս յարուցին, բայց պահպանողականների հակառակութեան պատճառով մերժուեց: Հարցը չհանգաւ, և Ս. Միլից յետոյ կանանց դատը պարլամենտում պաշտպանեց Գ. Բրայտ. սրա եղբայր Ջոն Բրայտը թէև առաջադիմականների կողմից էր, այնուամենայնիւ նա կանանց ընտրողական իրաւունքներ ձեռք բերելուն հակառակ էր: Նոյնպէս և հակառակ էր Գլադստոնը, թէև սա իր ճառերից մէկում կանանց դատն այնպէս գեղեցիկ կերպով պաշտպանեց, որ կանանց հարցի ամենաջերմ պաշտպաններից մէկը ևս հազիւ այդ կարողանար անել:

Այսպէս կանանց հարցն առաջ գնալով՝ 1869 թուին անգլիական կանանց ընդհանուր ընտրութիւնների մէջ մասնակցելու թոյլ տրուեց: 1870 թ. էլ դպրոցական խնդիրների ընտրութիւնների մէջ ներգործական դեր ստացան: Սրանից յետոյ բաւականին դժուարութեամբ յաջողեցին բարձրագոյն կրթութիւն ստանալու իրաւունքը: Ամեն տեղ հնչում էր Միլի խօսքերը «կրթեցէք կանանց այնպէս, ինչպէս տղամարդկանց, այն ժամանակ նրանք կունենան այն ամենը՝ ինչ որ տղամարդիկ ունին»:

Գալով բարձրագոյն կրթութիւն ստանալու իրաւունքին, սա նոյնպէս մի քանի տարի շարունակ պարլամենտի հարցերից մէկն էր և այնչափ ձգձգուեց, որ վերջապէս 1871 թուին թոյլ տրուեց բժշկական, ապա միւս բոլոր մասնագիտութիւններին մասնակցել և լսել. նոյնպէս թոյլ տրուեց քննութիւն բռնել և իրաւունք ստանալ: Այդ օրուանից ահա նրանք զարմանալի եռանդով բժշկականութեան մէջ յառաջ գնացին, և ոչ թէ գործնականի, այլև տեսականի մէջ էլ տղամարդ բժիշկներից յետ չմնացին: Առաջին կին բժիշկը Լօնդօնում և առհասարակ ամբողջ Եւրոպական աշխարհում

1859 թուին յայտնի է անգլուհի Եղիսաբէթ Բլէկէլ. սա շատ յայտնի եղաւ իր աշխատութիւններով և ձեռք բերած ժողովրդականութեամբ: 1881 թուին մի ուսանողուհի անատօմիական աշխատանքի համար ոսկեայ մեդալ ստացաւ և այլն: Բժիշկ կանայք մանաւանդ աւելի օգտակար եղան Հնդկաստանում: Այնտեղի կրօնական հայեացքով՝ կանայք նոյն իսկ ամենավտանգաւոր դէպքում իրաւունք չունին տղամարդկանց երես տեսնելու, հետեւապէս բժիշկներ կանչելու: Ահա այստեղ անգլուհին հնդկիների համար անփոխարինելի գանձ դարձաւ և գործելու ասպարէզը լայնացաւ: Այսպէս հետզհետէ միւս համալսարանների համար ևս կանայք իրաւունք ստացան, ինչպէս թոյլ տրուեցաւ Կեմբրիջի համալսարանում մտնել. միայն պրօֆէսորների թոյլտուութեամբ: Այս համալսարանում 1878 թ. 100-ից աւելի ուսանողուհի կար և այստեղ քննութիւն բռնեց Գլադստօնի աղջիկը: 1872 թ. Լօնդոնում բացուեց կանանց համար լիակատար դասընթացներով, բժշկական բարձրագոյն դպրոց: 1877 թ. այս դպրոցի մասնաժողովը հրաման ստացաւ ուսանողուհիների հետ կլինիկներում աշխատել: Այստեղ շատ կանայք ուսուցչապետութեան ամբիոն ստացան և այլն:

Անգլուհին ոչ թէ միայն բժշկականութեան մէջ առաջ գնաց, այլ և գիտութեան այնպիսի ճիւղերի մէջ ևս, որոնք կանանց դրութիւնն ապահովեցնում և նրանց արժանաւորութիւնը բարձրացնում են: Մի խօսքով՝ նրանք իրանց սովորածներից գործնական կերպով օգտուում էին: Այսպէս, երբ 1866 թ. անգլիական կառավարութիւնը մի քանի տեղերում տարածուած հասարակաց տներն օրինաւոր համարեց, և արգելք չեղաւ դրա տարածուելուն, ահա այդ բանի դէմ անգլիական ուղղախոհ, ազատամիտ կանայք սաստիկ յուզուեցին. բանով, գործով և բազմաթիւ ժողովներով ժողովրդին գրգռեցին, և կառավարութեան այդպիսի վարմունքի դէմ բողոքեցին. մի վարմունք՝ որով կանանց արժանաւորութիւնն ու պատիւը շօշափուում էր: Կանանց եռանդալից գործունէութիւնն այն աստիճան հեղեղեց Անգլիան, որ պարլամէնտն իր հաստատած

վճիռն օրէնքի միջից ստիպուած՝ դուրս ձգեց: Ահա սրանով նրանք հանգստացան և իրանց ընկած քոյրերի պատիւը պաշտպանուած տեսան:

Անգլիական կանայք դեռ 1859 թուից սկսած փոռտալին և հեռագրատան ծառայութիւնների մէջ գործեցին և հետզհետէ իրաւունք ստացան զանազան տեխնիքական և մասնագիտական դպրոցներ մտնել, գործնականապէս սովորել և իրենց դրութիւնը լաւացնել: Առաջ գնացին նոյնպէս նկարչութեան, լուսանկարչութեան պէս-պէս ձեռագործներ պատրաստելու, հաշուապահութեան և այլ բաների մէջ: Նրանք իրենց ունեցած պատրաստութեամբ կրպակներում լաւ տեղեր գրաւեցին, տպարաններում անգամ մեծ յաջողութիւն ունեցան, այնպէս որ՝ այս կողմից Անգլիան շատ պետութիւնների, մանաւանդ Գերմանիայի համար օրինակ դարձաւ:

Ա. ԶԻԼԵՆԿԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)